

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՅԼԸՆՏՐԱՆՔԻ ԽՆԴԻՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

(XIII դ. երկրորդ կես – XIV դ. սկիզբ)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Ս.

Յուրաքանչյուր պատմական դարաշրջան փորձում է գտնել հասարակության կազմակերպման լավագույն կողմերը անկախ այն հանգամանքից, որ բոլոր ժամանակաշրջաններն էլ իրենց հետևում թողնում են պատերազմներ, աղքատություն: Պատմական միջավայրի հոգևոր-քաղաքական ուժերը անընդհատ պրպտում են կյանքը գեղեցիկ դարձնելու ճանապարհները, մանավանդ երբ անցյալը վատ կողմերով էր ներկայացել, ապա հասկանալի է ներկան ինչ-որ ձևով վերակառուցելու մղման անհրաժեշտությունը: Ներկան վերափոխելու ուղղությամբ ձևավորված գաղափարները և դրանց կենսագործման համար նպատակադրված գործողությունների ամբողջությունը կազմում են դարաշրջանի բովանդակությունը:

Քննարկվող ժամանակաշրջանում Կիլիկյան Հայաստանում ձևավորված հոգևոր-քաղաքական միջավայրի բնութագիրը այսպիսին էր. «Եւ ի վերայ այսր ամենայնի ոչ զարհուրումն և ոչ դողումն, ոչ փոյթ և ոչ երկիւղ, ոչ պնդութիւն հաւատոյ և ոչ յաւժարութիւն գործոց բարեաց, այլ հաւատք պակասեալք և ամպարշտութիւն զօրացեալ, արդարութիւն հալածեալ և անարեւնութիւն արմատացեալ, սէր եղծեալ և անգթութիւն ծաղկեալ, Աստուած վաճառեալ և ազահութիւն թագաւորեալ, անուն և ձեւ լոկ՝ քրիստոնէութեան, և կարգք և վարք՝ ոչ բնաւ ումեք»¹: Ժամանակաշրջանի նման թեկուզ չափազանցված բնութագիրը (հիշատակարանը գրանցվել է 1230 թ.) արտացոլում է հոգևոր-քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները: Մշտական լարվածությունը և հակասությունները անընդհատ շոշափում էին մարդկանց գիտակցությունն ու զգացմունքները, բորբոքում նրանց երևակայությունը և խթանում ոչ միայն նրանց անհավասարակշիռ գործողությունները, այլև միջավայրը վերակառուցելու ցանկությունները: Խնդիրը ոչ միայն միջավայրի ծանրության և այն վերակառուցելու անհրաժեշտության, այլև իրականության նկատմամբ ձևավորված հարաբերությունների մեջ է, որը կարելի է բնութագրել որպես անհանգստության ու վախի զգացողություն: Սա պարզորոշ վկայում է, որ ձևավորված իրավիճակը, երբ չի տեղավորվում էթնոսի ավանդական պատկերացումներում, այդ հարաբերությունները սկսում են ձևախախտվել: Այստեղից էլ վախի և անհանգստության զգացողությունը: Մովորաբար գոյություն ունեն ավանդական գիտակցության մի քանի տիպեր, որոնք անհրաժեշտ են պատմության շրջադարձերին հարմարվելու համար: Փաստորեն, ավանդական գիտակցությունը լուծում է կարևորագույն խնդիրներ. ա) հասարակության ներսում առաջանում են տարաբնույթ կողմնորոշումներ, բ) ձևավորվում է այս կամ այն

¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ **Սաթևոյան Ա.**, Ե., 1984, էջ 167:

միջավայրին հարմարվելու ունակություն, գ) հնարավորություն է ստեղծվում ճշգրտել կողմնորոշման արժեքային բովանդակությունը և տարածական սահմանները:

Եթե փորձենք ձևակերպել իրավիճակից բխող խնդիրները, ապա կառավարող շրջանակների պարտավորություններից էին ընդհանուր բարօրության և անվտանգության ապահովումը, եկեղեցուն օժանդակելու առաքելությունը: Փաստորեն, ձևավորված ներքին և արտաքին իրավիճակը հայ հասարակությանը ինքնավերակառուցման պահանջներ էր ներկայացնում: Այս դեպքում հասարակությունը հնարավորություն ուներ ընտրություն կատարելու երկու սկզբունքի շրջանակներում, քանզի ինքն ի վիճակի չէր վերակառուցելու արտաքին միջավայրը. ա) պետք է համակերպվեր ձևավորված իրավիճակի հետ, բ) փոխեր իր կազմակերպման որոշ հատկանիշներ և անհրաժեշտ հավասարակշռություն հաստատեր իր և արտաքին միջավայրի միջև:

Չնայած քննարկվող ժամանակաշրջանում հավատքի նկատմամբ ձևավորվում էին նոր հարաբերություններ, հոգևոր միջավայրը շարունակում էր սնվել կրոնական գաղափարներով, այնուամենայնիվ, դժվար է սահմանագիծ անցկացնել աշխարհիկ և հոգևոր բնագավառների միջև: Խնդիրը բարդանում էր նաև նրանով, որ հոգևոր-քաղաքական գիտակցությունը միշտ ծանրաբեռնված էր անցյալից ժառանգած հիշողություններով, որոնց ներկայությունը մեծացնում էր լարվածությունը տարաբնույթ գաղափարների միջև. «Իսկ զժամանակ ելանելոյ նոցա, ասէ Մէծն Ներսէս, եթէ զկնի իմոյ վախճանիս՝ յորժամ անցանէ 2 (700) ամ, սկսանի այս լինել: Եւ արդ է, ըստ վճռի սրբոյն Ծ (50) ամ զաւրանալոյ նոցա յաղթութեան և յորմէհետէ մտեալ են ի յարեւելեան աշխարհն Հայոց՝ ԻԸ (28) ամ է. չար ինչ գործեցին ապականութիւն երկրին, և տապալումն քաղաքաց և դղեկաց, և աւեր եկեղեցեաց, և մահս ազգիս ազգիս, և գերութիւնս: Եւ թէ որպէս յետ այնորիկ հաշտեցան ընդ մնացորդսն ի ձեռն իշխանաց աշխարհին և արարին խնամութիւնս և մնացեալ եկեղեցեացն և եկեղեցականացն դիրութիւնս և ազատ կամաք կալ ի կրանս իւրեանց: Սակայն անլրապէս պահանջումն հարկաց ճշդիւ և անխնայապէս ըստ զլիսոց արանց և անասնոց, բաց ի մանկանց եկեղեցոյ և ամենայնի, որք զձեւ աղալթականութեան և զկարգ ունիցին»²: Վերոհիշյալ երկու մեջբերումը պարզորոշ վկայում է, որ քննարկվող ժամանակաշրջանում հայ հասարակության համար թշնամական էր ոչ միայն արտաքին, այլև ներքին միջավայրը:

Մոնղոլական առաջին արշավանքները ծանր ու ողբերգական հետեւանքներ էին թողել, ուստի հրապարակ են գալիս մի շարք ծրագրեր, որտեղ շրջանառվում էր նաև մոնղոլներին քրիստոնեացնելու խնդիրը: Այս գաղափարը պատահական չէր շրջանառության մեջ դրվել, քանզի փորձում էին վերակառուցել մոնղոլական միջավայրը, որպեսզի այն առավել անվտանգ դառնա:

Եթե հանրագումարի բերենք հոգևոր-քաղաքական միջավայրի վերակառուցման որոնումները, ապա կունենանք միմյանց փոխկապակցված

² Նույն տեղում, էջ 246-247:

երեք ճանապարհ. ա) երազանքների, բ) վերակառուցման, գ) ինքնա-
օտարման:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում քաղաքական կողմնորոշումը
շրջանառվում էր նաև դեպի հեթանոս մոնոթոլները: Չնայած մոնոթոլական
արհավիրքն ընդունվեց որպես ճակատագիր, սակայն անհրաժեշտ էր լու-
ծել երկու խնդիր. երկիրը զերծ պահել ավերիչ արշավանքներից և վերա-
կառուցել հասարակության հոգևոր-քաղաքական միջավայրը: Առաջին
խնդիրը կարելի էր լուծել բանակցությունների ճանապարհով: Այս դեպ-
քում քաղաքական կողմնորոշումն ուներ հորիզոնական բնույթ, քանզի
Կիլիկյան Հայաստանի և մոնոթոլների միջև հաստատված փոխհարա-
բերությունները կրում էին ռազմաքաղաքական բնույթ: Երկրորդ խնդիրը
կարելի է ներկայացնել տարբեր տեսանկյուններից: Բանն այն է, որ Կի-
լիկյան Հայաստանում գոյություն ունեին մի շարք էթնոմշակութային
միջավայրեր, ուստի ձևավորված իրավիճակն իր մեջ պարունակում էր
ինքնավերակառուցման երեք տարբերակ. ա) բոլոր էթնոմշակութային
միջավայրերը պահպանում են իրենց գոյությունը և նույնականությունը,
բ) հայկական միջավայրը տրոհելու և տարրալուծելու է մյուս համակար-
գերը, գ) հայկական մշակութային միջավայրը հրաժարվում է իր հատկա-
նիշների մի մասից: Այս պայմաններում Հեթում Ա-ն (1226-1269) պետք է
փորձեր իր գործունեությունը երազանքների դաշտից տեղափոխել վերա-
կառուցման բնագավառ, որը պահանջում էր նախաձեռնություն ու
արիություն: Խնդրո առարկա ժամանակաշրջանում տեղի ունեցած յուրա-
քանչյուր բացասական իրադարձության և երևույթի մեղավորներին սո-
վորաբար փնտրում էին հասարակական-քաղաքական ընտրախավի շրջ-
ջանակներում: «...և առ հասարակ ամենեքեան խոտորեցաք և ի միասին
անպիտանցաք, ըստ մարգարեին, մանաւանդ որ զառաջնորդական ունին
աշտիճան, աստարացան միանգամայն ի ճշմարտութենէ և ծառայք եղեալ
չար տերանց...»³: Որոշ դեպքերում էլ առաջնորդները ստիպված էին լի-
նում կատարել այն, ինչը չէին ցանկանում. «Եւ իբրև լուաւ արքայ Հե-
թում, յոյժ տրտմեցաւ և ասէ. «Լա՛ւ էր ինձ, եթէ գորդի իմ՝ զԼևոն, խըն-
դրեալ էին յինէն, քան թէ՛ գնոսա...»⁴: Խոսքը վերաբերում է Կիլիկիայում
սպաստանած Իկոնիայի սուլթանի ընտանիքը մոնոթոլներին հանձնելուն:
Սա ոչ թե դարաշրջանին հատուկ կեղծ բարեպաշտություն է, այլ լարված
իրավիճակի արձագանք, քանզի մոնոթոլական արհավիրքը կանխելու ցան-
կությունը հանդիպում է մեղք գործելու զգացողությանը: Այս դեպքում
Հեթում Ա-ի նպատակը մոնոթոլների գերակայության ներքո հայկական
պետականության պահպանումն էր: Սա որոշակի ճշգրտումներ մտցրեց
նրա գործունեության մեջ. «Ընդունէր զամենայն ազգաց քրիստոնէայս
և աղաչէր սիրով կալ ընդ միմեանս, իբրև զեղբարս և զանդամս
Քրիստոսի, որպէս պատուիրեաց Տէր, թէ՛ «Յայսմ ծանիցեն, թէ իմ
աշակերտք էք, եթէ զմիմեանս սիրիցէք»⁵: Անհրաժեշտ է ուշադրություն
դարձնել, որ դավանաբանական հանդուրժողականությունը ինքնա-

³ Նույն տեղում, էջ 233:

⁴ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Ս. Մելիք-
Օհանջանյանի, Ե., 1961, էջ 285:

⁵ Նույն տեղում, էջ 370-371:

նպատակ չէր, այլ ձևավորված իրավիճակի արդյունք: Չպետք է աչքաթող անել նաև այն, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում իրական քաղաքական հետաքրքրությունների և դավանաբանական կողմնորոշման միջև դեռևս առկա էին խոր հակասություններ:

Մոնղոլների հետ Հեթումի հաստատած հարաբերությունները կարելի է համարել հեռատես քաղաքական քայլ, սակայն այն անցանկալի ազդեցություն ունեցավ մահմեդական աշխարհի վրա. «Յայսմանե լցեալ նախանձու պաշտանեայք Մահմեդի ամենայն ուստեք նիւթէին նենգութիւն ի վերայ Հայոց»:⁶ Այս դեպքում ոչ մի զարմանալի բան չկա, որ մոնղոլների դաշնակից Կիլիկիան փորձում էր կարգավորել փոխհարաբերությունները մահմեդական հարևանների հետ, իսկ մյուս կողմից օգնում էր խաչակիրներին: Մակայն մոնղոլների, Կիլիկյան Հայաստանի և խաչակիրների կրած ծանր պարտությունները վերջակետ դրեցին քաղաքական կողմնորոշման այն ուղու արդյունավետությանը, որը որդեգրել էր Հեթումը. «Յետ այսորիկ հիւանդացաւ թագաւորն Հեթում, որ եւ մեռաւ իսկ լեալ կրանաւոր, թաղեցավ ի սուրբ ուխտն Դրագարկն...»:⁷ Փաստորեն, Մերձավոր Արևելքում ձևավորվել էր քաղաքական նոր իրավիճակ, որը պահանջում էր որդեգրել այլ քաղաքականություն:

Իրականությունից դժգոհ և խռով տրամադրությունները, երբ հանգրվան չեն գտնում որոշակի արժեքների շրջանակներում, ի վիճակի չեն երկար ժամանակ թաքնված մնալու: Եթե հաշվի առնենք, որ ժամանակաշրջանը և միջավայրը անբաժանելի էին կրոնական պատկերացումներից, ապա հասկանալի էին մարդկանց ձգտումները, երբ փորձում էին ինքնաբավարարվածություն ստանալ նախ և առաջ կրոնական միջավայրում:

Խնդրի բարդությունն այն է, թե այդ ձգտումների իրականացման ճանապարհին ինչ գործառնություններ էր իրականացնում կրոնական գիտակցությունը, քանզի այն ներկայանում էր որպես միջնորդ անցյալի, անկատար ներկայի և ցանկալի ապագայի միջև: Անցյալ ասելով՝ նկատի ենք առել միայն այն, որ հասարակական-քաղաքական ուժերի մի մասի կարծիքով հայոց եկեղեցու դավանաբանական կազմակերպումը և կառույցը անկատար են, և ավարտուն տեսք տալու համար փորձում էին վերափոխումներ կատարել: Ամեն դեպքում դավանաբանական այլընտրանքը պարունակում էր և՛ անձնական, և՛ հասարակական խնդիրներ, հակառակ դեպքում այն չէր վերածվի որոշակի շարժման: Անձնականը իր մեջ թաքցնում էր սեփական ինքնակազմակերպումը եկեղեցական այլ միջավայրում: Երբ աշխատում էին վերակառուցել հայոց եկեղեցին, նշանակում է խնդիրը գիտակցվում էր որպես հասարակական իրողություն: Արդեն Հեթում Բ-ի (1289-1306) համար դավանաբանական այլընտրանքը վերածվել էր որոշակի քաղաքականության, որի վերջնական հանգրվանը ընդհանրական եկեղեցին էր: Այս դեպքում դավանաբանական տարբերությունները հանդես էին գալիս որպես քաղաքական խնդիրների լուծման միջոցներ: Եթե դավանաբանական այլընտրանքը դուրս է գալիս անձնական

⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 587:

⁷ Նույն տեղում, էջ 588:

իրավիճակից և ձգտում է դառնալ հասարակական, ապա ձևավորվում է դավանաբանական շարժում, որն ունի միջավայր, գաղափարախոսություն, խնդիրներ: Միջավայրը թույլ է տալիս շարժման հիմնական հատկանիշները տեղակայել տարածության և ժամանակի մեջ, քանզի Կիլիկյան Հայաստանի դավանաբանական միջավայրը տարաբնույթ էր: Յուրաքանչյուր էթնոմշակութային միջավայր, կախված իր կազմակերպման ձևից, միշտ փորձում էր ներագդել շարժման գաղափարախոսության վրա: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ յուրաքանչյուր էթնոմշակութային համակարգ ներառում էր տարաբնույթ ենթահամակարգեր, որոնք ևս ազդում էին շարժման վրա: Եթե փորձենք շարժումը ներկայացնել միայն դավանաբանական ձևի մեջ, ապա կարելի է առանձնացնել ըստ եկեղեցական համակարգերի՝ հունական, հռոմեական և ընդհանրական: Խնդիրը պարզ է, քանի որ էթնոսը հրաժարվում է ավանդական գաղափարախոսության որոշ հատկանիշներից և ընդունում է հունական կամ հռոմեական եկեղեցու որոշ գաղափարներ: Երրորդ դեպքում ընդունվում են բոլորի համար ընդհանուր համարվող սկզբունքները: Շարժման կառուցվածքի և գաղափարախոսության վրա որոշակի դեր էր խաղում այն հանգամանքը, թե ովքեր էին ստանձնում առաջնորդության գործառույթները. «Յայնժամ եպիսկոպոսն Անարգաբոյ Գրիգոր եկն առ նա (իմա՝ Հէթում Բ) և գտին զիրեարս համախոհք: Եւ զի էր Գրիգորն քաջ գիտնական և կատարեալ տելէտ, ետուն միմեանց բանս և եղև նորա բերան, և զորս խաւսերէ՛ թէ յիւրոցն և կամ ի նորայոցն, խոռվութիւն և խաւար ածեր եկեղեցւոյ...»⁸: Միայն արիության և գիտելիքների միության շնորհիվ՝ ապագան չի գալիս որպէս ճակատագիր, ընդհակառակը, դրանցով զինված թագավորը և ապագա կաթողիկոսը աշխատում են ընդառաջել նրան: Այստեղ միություն են կազմում Հէթումի առաջնորդությունը և Գրիգոր Անավարդեցու գիտելիքները:

Առաջին խնդիրը, որի լուծմանը ձեռնամուխ եղավ Հէթում Բ-ն, համընդհանուր խաղաղություն հաստատելու փորձերն էին: Այս դեպքում դավանաբանական կողմնորոշումը կրում էր հասարակական բնույթ, քանզի քրիստոնյա աշխարհը Կիլիկյան Հայաստանին օգնություն էր խոստանում դավանաբանական զիջումների դիմաց: Փաստորեն, անկախ Հէթումի անձնական ձգտումներից և ցանկություններից, նա կրում էր տվյալ ժամանակաշրջանի՝ քրիստոնյա աշխարհում ձևավորված միտումներից երկուսը. ա) պապականության գերագահության ներքո հասնել եկեղեցիների միասնության, բ) մահմեդական աշխարհի, մասնավորապէս Եգիպտոսի դեմ պայքարում օգտագործել նաև մոնղոլների ռազմական ուժերը: Այս ուղղությամբ բավական մեծ աշխատանքներ էին կատարում Կիլիկյան Հայաստանում և պապական արքունիքում:

Դժվար է ամբողջովին պարզաբանել Հէթում Բ-ի քաղաքականության ներքին և արտաքին դրդապատճառները, քանզի սխալ կլիներ մտածել «...եւ ժառանգաւոր թագին, եւ յոյժ սիրող իմաստութեան գրոց, եւ միաբանութեան քրիստոնէից ազգաց...»⁹ քաղաքական գործիչը այնքան

⁸ **Բաղդասարյան Է.**, Գևորգ Սկևռացու վարքը (Բանբեր Մատենադարանի, 1964, N 7, էջ 421):

⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 701:

միամիտ էր, որ իր անձնական փրկության համար Կիլիկյան Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը ներքաշեր անօգուտ դավանաբանական պայքարի բարդ հոլովույթի մեջ: Վերոհիշյալ տեքստում «...եւ միաբանութեան քրիստոնէից ազգաց» հատվածը ունի ոչ միայն դավանաբանական, այլև քաղաքական բովանդակություն:

Դավանաբանական շարժումը փորձում էր վերակառուցել նաև հայոց եկեղեցու մշակութաքաղաքական գործունեությունը: Այն ճիշտ պատկերացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հայ հասարակության տարաբնակեցման ու դավանաբանական կազմակերպման պատկերը: Հայկական էթնիկական ընդհանրությունը Մեծ Հայքից դուրս զբաղեցրել էր տարաբնույթ միջավայրեր և հայտնվել արժեքային կողմնորոշումների բարդ հորձանուտում¹⁰: Հայ հասարակության դավանաբանական կազմակերպման մյուս առանձնահատկությունը հատվածայնությունն էր, ուստի շարժման կարևոր խնդիրներից մեկն ընդհանուր մոդելի մշակումն էր: Դավանաբանական շարժման գաղափարախոսության մեջ շրջանառվում էր ընդհանրական մոդելի կառույց, որը պետք է միավորեր հատվածական կենտրոնները:

Կիլիկյան Հայաստանում աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև ձևավորված հակասությունների հաղթահարման ճանապարհներից մեկը Հեթում Բ-ի կրոնավորումն էր, ընդամին, որպես կաթոլիկ միաբանության (ֆրանցիսկյան) անդամ: Վանական ուխտը համատեղում էր բարոյաքաղաքական ու դավանաբանական իդեալները, որոնք այս դեպքում համահունչ էին Հեթումի բնավորությանը և կենսաձևին: Դրանք «սուրբ աղքատության», ամուրիության պահանջներն էին և ինքնակատարելության ձգտումը: Այս դեպքում ֆրանցիսկյան միաբանությունը ինչ-որ մասնաբաժնով ի վիճակի էր համատեղելու Հեթումի հոգևոր-քաղաքական իդեալների այս մասը: Ներքին ինքնամփոփ վիճակը արդյունք էր այն բանի, որ Հեթում Բ-ն ընդունակ չէր պատասխանելու առօրյա կյանքում առաջացած բոլոր հարցերին: Եթե անհրաժեշտություն էր առաջանում կատարելու պատմական նշանակությամբ գիտակցվող գործողություն, ապա այն դիտվում էր որպես Աստծո կողմից կանխորոշված:

Փաստորեն, դավանաբանական կողմնորոշումը այն ճանապարհն էր, որը տանում էր դեպի նպատակ, այլ խոսքով՝ քայլ առ քայլ մոտեցնում գաղափարների կենսագործմանը: Այս դեպքում դավանաբանական այլընտրանքի առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ փորձում էին ընտրված կողմնորոշումը վերածել միջավայրը վերակառուցելու գաղափարախոսության. «Դու գայդ մեծ սերդ արարեր. Աստուծոյ շնորհօքն. և թէ գայդ այլ կարես առնել, որ գմեզ օրհնել տաս, և Աստուծոյ եկեղեցոյն միաբանես. նա՛ համարէ, թէ Քրիստոս ես գմեզ արեամբ ի դժոխոցն կու գնես քեզ հոգով և մարմնով ծառայք և միշտ աղօթողք և օրհնողք. զի եղեր մեզ առաքեալ, և Լուսաւորիչ...»¹¹: Աստծո ստեղծած աշխարհում փրկության գործում կարևոր դեր էր խաղում բարի գործեր կատարելը, ուստի կաթողիկոսը համոզված էր և համոզում էր, որ Հեթումը աստվածահաճո և բարի

¹⁰ Ղ. Ալիշան, Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 123:

¹¹ Կղեմես Գալանոս, Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ, հ. I, Հռոմ, 1650, էջ 440:

գործեր կատարի: Որպեսզի հայոց եկեղեցին կարողանար իրագործել իր առաքելությունը, պետք է միավորվեր մյուս եկեղեցիների հետ. «Եւ ընդունիմք զամենայն քրիստոնէայք Հռոմայ եկեղեցոյն. զի այնք մերձ են առ սատուծոյ, որպէս և առաջին աթոռոյն. և անընդմիջաբար առնուն յաստուծոյ ամենայն իմաստութիւն և զինամք, որպէս մեր սուրբ հարքն ամենայն: Նա և ընդունիմք զչորս պատրիարկքն և Քրիստոսի սուրբ անուամբն քրիստոնէայք, որ կոչին ուղղափառ»¹²: Ճակատագիրը այս առաքելությունը բաժին է հանում «կրոնաւոր» թագավոր Շեթումին. «...զի թէպէտ ի յերկրի մերում հետ Աստուծոյ տէր էք. ապա երբ զաշխարհիս փառքն թողիք, և կրօնաւոր եղէք, ի մեր բաժինս եղէք: Այլ զի նչ բան մանաւանդ պիտի առնէք, քան զոր Աստուծոյ որդին արար. զհաշտեցուցիչ երկրի և եկեղեցոյ լինելն. և խաղաղարար լինելովն, իբրև զորդին Աստուծոյ լինել, և երանելի կոչիլ»¹³: «Երկիր» և «եկեղեցի» հասկացությունների առանձնացումը տարաբնույթ նշանակություն ունի և մատնանշում է ոչ միայն կրկնաբնեւ իրականությունը, այլև աշխարհիկ և հոգևոր միջավայրերի միջև առաջացած լարվածությունը: Առաջին հասկացությունը օգտագործվել է նախ և առաջ քաղաքական նշանակությամբ և մատնանշում է Կիլիկյան Հայաստանում ձևավորված այն իրավիճակը, երբ քաղաքական պայքարը կրում էր էթնիկական բնույթ: Տարբեր էթնիկական խմբերի միջև ձևավորված լարված փոխհարաբերությունները խախտել էին հասարակության ներդաշնակ կենսագործունեությունը: Երկրորդ հասկացությունը շրջանառվել էր ոչ միայն մշակութային, այլև քաղաքական կողմնորոշման նշանակությամբ, ուստի ստանձնել էր վերջինիս գաղափարական գործառույթները:

Եթե քաղաքական կողմնորոշումը դեպի հեթանոս մոնոթլներ դեռևս հույսեր էր պարունակում մահմեդականության դեմ պայքարում նրանցից օգնություն ակնկալելու, ապա իրավիճակը փոխվեց, երբ մոնոթլները ընդունեցին մահմեդականություն. «Եւ սակս անդարձութեան մերոյ ոչ դարձաւ բարկութիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է ի պատժել և ի պատուհասեալ, և մեր ոչ զղջացեալ, մինչև ծուրեալ և ծըգեալ, հիւծեալ մաշեցան ամենայն կեանք մեր, ի մահ և դժոխս մերձեցան անձինք մեր, քանզի թողին զազանաբարու և այլադէմ և այլալուսու ազգին նետողաց զհայրենի արէնս իւրեանց, թողին և հետևեցան չար աղանդոյն կարապետ նեռին Մահմետի, և ևս քան զևս ընդ նեղութեան և ընդ հալածանաւք արկին զազգս քրիստոնէից»¹⁴: Փաստորեն, ինչքան հոգևոր-քաղաքական նպատակները ծանրաբեռնվում էին առավել ցանկալի ձգտումներով, այնքան մեծանում էր անհամապատասխանությունը նրա և իրականության միջև. «...ի թագաւորութեան Աւշնի, և ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդեայ, որք յայսմ ամի (1309) արսորեցին զմեզ ի կղզւոջն Կիպրոսի, վասն ոչ հնազանդելոյ աւանդիցն Քաղկեդո-

¹² Նույն տեղում, էջ 450:

¹³ Նույն տեղում, էջ 447:

¹⁴ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ **Խաչիկյան Լ.**, Երևան, 1950, էջ 51:

նի...»¹⁵: Հեթում Բ-ի որդեգրած դավանաբանական կողմնորոշմանը հաջորդ ժամանակաշրջանում սպասվում էր. ա) նա կարող էր նույնությամբ փոխանցվել, բ) հնարավոր էր, որ այն ամբողջովին մերժվեր, գ) կարող էր ներառվել նոր ձևավորվող գաղափարախոսության մեջ:

Եթե հանրագումարի բերենք վերը շարադրվածը, ապա կարելի է եզրակացնել. ա) Կիլիկյան Հայաստանի եկեղեցաքաղաքական շրջանակների մի մասը աշխատում էր հավատարիմ մնալ հայկական մշակութային միջավայրին, և այստեղ էին որոնում ձևավորված հարցադրումների պատասխանները. բ) երկրորդ խումբը փորձում էր ստեղծել նոր գաղափարախոսություն և դրա միջոցով վերակառուցել հոգևոր-քաղաքական միջավայրը. գ) հասարակական-քաղաքական շրջանակների մի մասը գիտակցաբար չէր մասնակցում պատմական գործընթացներին:

Այսպիսով, մոնղոլական արշավանքները ճշգրտումներ մտցրեցին Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ, քանզի ռազմա-քաղաքական դաշինքը որոշ ժամանակ հետին պլան մղեց Արևմուտքից ակնկալվող օգնության խնդիրը: Այստեղից էլ պարզ է, որ դիվանագիտական հարաբերություններում շրջանառվող դավանաբանական խնդիրները առավելապես քարոզչական բնույթ էին կրում: XIII դ. վերջին ձևավորված դավանաբանական շարժման առաջին փուլը կարելի է համարել գաղափարների հավաքման շրջան, քանի որ նրանք հանգրվան էին փնտրում Կիլիկյան Հայաստանի էթնոդավանաբանական միջավայրում: Շարժումը իր բարձրակետին հասավ XIV դարի սկզբին, քանզի աշխատում էին կենսագործել նրա մշակած գաղափարախոսությունը:

К ВОПРОСУ О ПОЛИТИЧЕСКОЙ ОРИЕНТАЦИИ И РЕЛИГИОЗНОЙ АЛЬТЕРНАТИВЕ В КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ

(вторая половина XIII – начало XIV вв.)

АРУТЮНЯН Г. С.

Резюме

Монгольские нашествия прояснили внешнюю политику Киликийской Армении, поскольку военно-политический союз на некоторое время оттеснил на задний план вопрос ожидаемой помощи с Запада. Исходя из сказанного, религиозные вопросы, муссируемые в дипломатических отношениях, имели, скорее всего, проповеднический характер.

Первый этап религиозного движения, развернувшегося в XIII в., являл собой этап формирования его идеологии в условиях этнорелигиозной среды – в Киликийской Армении. Движение достигло своего апогея в начале XIV в.

¹⁵ Նույն տեղում, էջ 63: